

տասիրական կամ աստուածարանական գիտութեանց վերաբերեալները կը կարօտէին ճշգրտութեան. այդ գիտութիւններուն անտեղեակ մը բնականաբար պիտի չկարենար տալ ճշմարիտ բացատրութիւնը և հայկական եզրներուն ճշգրտութիւնը ունենալ: Ինքը որ վարդապետ է այդ երկու գիտութիւններու մէջ, կը համարի ունենալ հարկ եղած պատրաստութիւնը լաւագոյն յաջողութեան մը համար:

Անդրադառնալով հուսկ իր գործին ծաւալին, կը յայտնէ սրտին ցաւը՝ չկարենալու բազմացնել օրինակները, որովհետեւ արագագիր ընդօրինակող մը հազիւ կրնայ տարուան մը մէջ գրի առնել, նոյնիսկ բոլորովին ազատ ըլլալով: Բայց այդպիսի ազատ արագագիր օրինակող մը չունի ինքը: Իսկ տպագրութիւնը, ուրիշ կարեւոր հարց մը, ամէնէն աւելի մտահոգիչ կէտն է իրեն համար:

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ

Կը շարունակուի վերեւ յիշուած նամակը, ուղղուած առ Գեր. Արրահամ վարդապետ, բացատրելով իր ցաւը չկարենալու ընդառաջ երթալ տպագրութեան մեծածախս գործին:

« Զօրինակն յետոյ առաքեցից ի տիպ ի Վենետիկ, բայց առ տիպն պահանջին աւելի քան Ռ ոսկիք »:

Յաջորդ տարին, որ է 1732, Յուլիս 23-ին կը գրէ կրկին առ Գեր. Արրահամ վարդապետն նոյն հարցին շուրջ:

« Որպէս զրեցի զԲառարանէն իմմէ, նոյնպէս շնորհիւ Տեառն, ի Հոկտեմբերի ամսոյն (1731) աւարտեցի զնա: Զսազրագիրն իմ օրինակիւց է, և զօրինակն ի Վենետիկ յղեցից ի տիպ, իսկ զքնագիրն առ իս պահեցից: Բայց զդրամս ոչ ունելով իմ առ տիպն, յուսամ ի Նախախնամութիւնն Աստուծոյ և ի ձեռնտութիւն Հօր մերոյ Սրբոյն Գրիգորի, թէ հնարեացի ծախ նորին »:

1733 Յուլիս 15-ին վերստին կ'ուղղէ նամակ մը առ նոյն Արրահամ վարդապետն, որ այդ թուականին եպիսկոպոս էր արդէն, բացատրելով իր ահաւոր դժուարութիւնները, և փափաք կը յայտնէ որ գէթ Էջմիածնի մէջ տպուի իր գործը:

« ԶԲառարանն իմ աւարտեցի ի վաղուց հետէ. չիք այժմ օրինակող, զի Տեառնդ հասուցանէի, թերեւս վաղագոյն այրք ի լոյս գար, ցորքան ողջ եմ: Ի Վենետիկ հազար ոսկիք խնդրին ի տպումն, և ես զայսչափ ոչ ունիմ »:

Նոյն թուակիրը ունի ուրիշ նամակ մը, ուղղուած այս անգամ Յովհաննէս վարդապետի մը, որուն կը բացատրէ նոյնպէս իր սրտին ցաւը:

« Ահա շնորհիւ Տեառն աւարտեցի ի վաղուց հետէ զբառարանն, զոր գանձ լեզուին հայոց մտկարեցի: Է մեծ, ունելով 4230, ՄՆ տապաղայս, զոր ի տպել հազար ոսկիք պահանջին: Նոյն տէր Ռարունապետն (կ'աւելցնէ Տաշեան փակագծին մէջ, այսինքն Արրահամ եպիսկոպոս, յետոյ կաթողիկոս), գիտեմ զի բաղձայր տեսանել զնա, բայց օրինակող չիք այնպիսի առ մեզ. ես ոչ զհազարս ունիմ ոսկիս, և ոչ օրինակել կարեմ, վասնզի եմ այլովք շարագրութեամբք պատաղեալ: Զայսմանէ անցեալ աման զրեցի զյուրովս վերոյ ասացեալ Տեառն »:

Վենետիկ կատարուած դիմումները անլսելի չեն մնացած անշուշտ: Միտիթար փութացած է պատասխանել, ուզելով նոյնիսկ զիրացնել փափաքին իրագործումը, սակայն այդպիսի բազմածաւալ գործ մը զիրազին աշխատանք չէր կրնար ըլլալ: Հազար ոսկիի մը պահանջը շատ արդար էր: Իրեն կը մնար հանգանակութեամբ, կամ մեծահարուստներու դիմելով հոգալ, բայց ինքն ալ զբաղած իր առաքելական և զբաւորական վաստակներուն, կարելի եղած չէ կարելիութեան հիմերու